ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒՅՈՒՆ»
(ՀՀԿ) ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան Բաղրամյան 19 հեռ. `/011/ 513281, ֆաքս՝/010/525412

30 նոյեմբեր 2017թ.

Հետք պարբերականի լրագրող Մեդա Ղուկասյանին
ԱԺ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն»
խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանից

Հարգելի Մեդա Ղուկասյան.

Ի պատասխան Ձեր հարցմանը՝ տեղեկացնում ենք, որ 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո քաղաքացիների հետ հանդիպումները եղել են պարբերական : Ես ռեյտինգային ընտրակարգով պատգամավորության թեկնածու եմ եղել թիվ 9 ընտրատարածքում, որն ընդգրկում է Լոռու մարզը և ընտրվել եմ այդ ընտրատարածքից : Պատասխանատվություն եմ կրում ողջ ժողովրդի, մասնավորապես, այդ ընտրատարածքի բնակիչների առջև : Քաղաքացիների հետ հանդիպումներ, ընդունելություններ կազմակերպվում են գրեթե յուրաքանչյուր շաբաթ Վանաձորում, յուրաքանչյուր անգամ առնվազն 15-20 քաղաքացու հետ : Առանց ձևաթղթերի, նախապես հերթագրվելու, անկաշկանդ մթնոլորտում անցնում են հանդիպումները : Մենք ընտրել ենք այս ձևաչափը, քանի որ ամենապարզ և մարդկային շփումն է, որ հնարավորություն է տալիս վերհանել խնդիրները և լուծել դրանք :

Հիմնականում, քաղաքացիները դիմում են անձնական խնդիրներով, որին էլ հնարավորության սահմաններում, փորձում ենք լուծում առաջարկել տեղում : Դուք նշել էիք, որ, եթե կան նկարներ

ուղարկենք դրանք, հիմնականում մարդկանց կաշկանդում է նման մթնոլորտը, ուստի խուսափում ենք մարդկային պարզ շփումը կաշկանդող ցանկացած մեթոդի կիրառումից :

Ֆեյսբուքի պաշտոնական իմ էջից կարող եք տեղեկանալ կատարված աշխատանքների, ընդունելությունների արդյունքում բարձրացված հարցերի և դրանց լուծումների, իմ պատգամավորական գործունեության մասին, առհասարակ:

Ընդունելությունները և հանդիպումները չեն սահմանափակվում միայն Լոռու մարզով : Հնարավորության սահմաններում ընդառաջում ենք քաղաքացիների խնդրանքին՝ կազմակերպելով ընդունելություն, հանդիպում կամ տեղում կազմակերպում <<ընդունելությունը>>, ուստի հստակ վիճակագրություն քանակի հետ կապված տրամադրել չենք կարող : Ինչ վերաբերում է դիմումներին կամ առաջարկություններին, ապա տեղեկացնում ենք, որ բոլոր գրավոր դիմումները՝ ըստ սահմանված կարգի, ստանում են պատասխան :

Հուսամ, կարողացա աջակցել Ձեր նախաձեռնությանը :

Հարգանքով՝

Խմբակցության ղեկավար՝

ՎԱՀՐԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ